

## Ժողովրդավարութեան օրոյես Ժողովրդաիշխանութեան հրահրան սոցիալական եւ հրավաքարւաքական սիքաչաւսր

### Ռուսլան ՄԱՐԱՆԴՅԱՆ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ*

Պետականագիտության պատմությունը վկայում է, որ հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական առաջընթացի կարևորագույն նախապայմաններից մեկը պետության և հասարակության միջև հարաբերությունների ողջամիտ հավասարակշռության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հասարակական կենսագործունեության տարբեր ոլորտներում անհատների ինքնաիրացման լայն հնարավորությունների ապահովումն է: Այդպիսի պայմաններում պետությունը և հասարակությունը հանդես են գալիս ընդհանուր խնդիրների լուծմանը միտված երկմիասնության տեսքով, ինչը թույլ է տալիս հասարակության հետ ձևավորել գործընկերային հարաբերություններ և վերջինիս մտավոր, կազմակերպչական և այլ հնարավորությունները ծառայեցնել հանրային խնդիրների լուծմանը: Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է պետության մեջ ժողովրդավարական միջավայրի ձևավորմանը, որի պայմաններում պետության գործունեությունը բխում է ժողովրդի շահերից և ուղղված է այդ շահերի բավարարմանը:

Այս ենթատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում ժողովրդի՝ որպես իշխանության սկզբնաղբյուրի և ազգային ինքնիշխանության կրողի դերի կարևորումը, ինչը նախ և առաջ արտահայտվում է ժողովրդաիշխանության գաղափարի հռչակմամբ և դրա իրացման կառուցակարգերի ձևավորմամբ: Մյուս կողմից, կարևորվում են գործունեության այն ուղղությունները, որոնց օգնությամբ կյանքի են կոչվում ժողովրդի և անհատի՝ ժողովրդաիշխանությունից բխող հնարավորությունները:

Ժողովրդավարական միջավայրում ժողովրդաիշխանության իրացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում բնութագրվում է անցումային փուլին բնորոշ բացթողումներով և ժողովրդավարության կայացման գործում պետական մոտեցումների համակարգվածության պակասով: Այդպիսի պայմաններում էապես կարևորվում են «Ժողովրդաիշխանություն» և «Ժողովրդավարություն» եզրույթների էության բացահայտումը, նրանց հարաբերակցության, ինչպես նաև՝ ժողովրդավարության կայացման հիմնական ուղղությունների քննարկումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է ժողովրդաիշխանության գաղափարը: Բացի Հայաստանի անկախության մասին հռչակագրից (3-րդ կետ)<sup>1</sup>, այն իր արտացոլումն էր գտել նաև «Անկախ պետականության

<sup>1</sup> Տե՛ս <http://www.gov.am/am/independence/> (25.06.2014, 11:36):

հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում (2-րդ հոդված)<sup>2</sup>:

Գիտական գրականության մեջ ժողովրդաիշխանությունը համարվում է ժողովրդավարության ամենակարևոր տարրերից մեկը, որը մեկնաբանվում է որպես պետական իշխանության պատկանելի ժողովրդին և վերջինիս կողմից դրա իրականացումը ինչպես անմիջականորեն, այնպես էլ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով<sup>3</sup>:

ժողովրդաիշխանության հայեցակարգի հիմնարար գաղափարն է **ինքնիշխանությունը**: Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ ժողովրդի ինքնիշխանությունը բնորոշվում է որպես «ժողովրդի լիիշխանություն, այսինքն՝ ժողովրդի կողմից սոցիալ-տնտեսական և քաղաքական միջոցների տիրապետումը, որն ապահովում է բոլոր սոցիալական խմբերի և շերտերի բազմակողմանի իրական մասնակցություն հասարակության և պետության գործերի կառավարմանը»<sup>4</sup>:

Չնայած ժողովրդավարության բնորոշումների բազմազանությանը՝ դրանց ճնշող մասին հատուկ է ժողովրդին իշխանության աղբյուր հռչակելը: Ուստի առաջանում է միանգամայն տրամաբանական հարց. ի՞նչ հարաբերակցության մեջ են ժողովրդաիշխանությունը և ժողովրդավարությունը, արդյո՞ք ժողովրդաիշխանության գաղափարի միայն հռչակումը բավարար է իրական ժողովրդավարություն ունենալու համար:

ժողովրդավարությունը և ժողովրդաիշխանությունը առաջին հայացքից նույնական են, սակայն նրանց այդպիսի համընկնումը առկա չէ ո՛չ գոյաբանական, ո՛չ էլ իմացաբանական իմաստներով: Ժողովրդավարության և ժողովրդաիշխանության միջև գոյություն ունի ուղղակի և հետադարձ կապ: Առանց ժողովրդավարության ժողովրդաիշխանությունն անիմաստ է, և հակառակը՝ միայն ժողովրդաիշխանության պայմաններում է հնարավոր իրական ժողովրդավարության գոյությունը:

Մեր դիտարկմամբ ժողովրդավարությունն ամենից առաջ ժողովրդաիշխանության գործնական իրացմանն ուղղված որոշակի գործունեության համակարգ է: Եվ չնայած ժողովրդավարության համար առանցքային նշանակություն ունի ժողովրդաիշխանության գաղափարը, այնուամենայնիվ պակաս կարևոր չեն այդ գաղափարի կենսագործման համար անհրաժեշտ կազմակերպական և այլ երաշխիքները:

Կարելի է եզրակացնել, որ ժողովրդաիշխանությունը հանրային նշանակության խնդիրների լուծումը սեփական ինքնիշխան կամքի հունով ուղղորդելու՝ իշխող սուբյեկտի (ժողովրդի) հնարավորությունն է, իսկ ժողովրդավարությունը՝ ժողովրդաիշխանության և դրանից ածանցվող ենթահամակարգերի կենսագործման համար անհրաժեշտ սոցիալական և իրավաքաղաքական բարենպաստ միջավայրն է, որի ստեղծման պա-

<sup>2</sup> Տե՛ս ՀՀԳԽՏ 1991/18:

<sup>3</sup> Տե՛ս Арутюнян Г. Г., Баглай М. В. Конституционное право: Энциклопедический словарь, Изд-во НОРМА, М., 2006, էջ 275; Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 56:

<sup>4</sup> Тухомирова А. В., Тухомиров М. Ю. Юридическая энциклопедия. Издание 6-е, дополненное и переработанное /Под ред. М. Ю. Тухомирова, М., 2009, էջ 919:

տասխանատուն ամենից առաջ պետությունն է: Այսպիսի բնորոշման առանձնահատկությունը հետևյալն է.

1) հստակ տարբերակվում են ժողովրդախիշխանությունը և ժողովրդավարությունը: Հատկապես ձևավորված առաջադիմական պետաիրավական արժեքներ չունեցող երկրներում փորձ է արվում նույնացնել դրանք՝ հնարավորությունների հռչակումը արդեն իսկ ներկայացնելով իբրև ժողովրդավարություն,

2) ժողովրդախիշխանությունը ներկայացվում է ոչ միայն որպես հավաքական-վերացական կատեգորիա, այլև շեշտադրվում է դրանից բխող ենթահամակարգերի (ժողովրդախիշխանության իրացման ուղղությունները, կառուցակարգերը, դրանց կենսագործման երաշխիքները) վրա, որոնց օգնությամբ առարկայանում և կյանքի է կոչվում ժողովրդախիշխանությունը,

3) ժողովրդավարության կայացման գործում ընդգծվում է հատկապես պետության դերը՝ որպես կազմակերպչական, իրավական և այլ ռեսուրսների տիրապետող ունիվերսալ քաղաքական կազմակերպություն:

Վերջին եզրահանգումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի բովանդակությունից, որը անդրադառնալով ժողովրդին պատկանող իշխանության իրականացման ձևերից մեկի՝ ազատ ընտրությունների պարբերական կազմակերպմանը, պետության վրա է դնում համապատասխան իրավունքի իրացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ստեղծման պարտավորությունը<sup>5</sup>:

Խոսելով ժողովրդախիշխանությունից ժողովրդավարության անցման մասին՝ հարկ է նշել, որ տեսության մեջ քննարկվում են ժողովրդավարության կայացման համար անհրաժեշտ հինգ փոխլրացնող պայմաններ՝

1) ազատ և նախաձեռնող քաղաքացիական հասարակություն,

2) կայացած քաղաքական համակարգ,

3) օրենքի գերակայություն, որը կապահովի իրավական երաշխիքներ՝ քաղաքացիների իրավունքների իրացման համար,

4) պետական կառավարման համակարգ, որը կիրառելի կլինի նոր ժողովրդավարական կառավարության կողմից,

5) զարգացած տնտեսական համակարգ<sup>6</sup>:

**Քաղաքացիական հասարակությունը**՝ որպես պետությունից հարաբերականորեն անկախ ինքնակազմակերպվող խմբերի և անհատների ամբողջություն, կարող է էապես ակտիվացնել քաղաքացիների մասնակցությունը պետության գործերի կառավարմանը և հանրային վերահսկողությունը ժողովրդախիշխանության ինստիտուտների կենսագործման նկատմամբ: Սակայն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացն ունի առանձնահատկություններ, որոնք, ի թիվս

<sup>5</sup> Stv Protocol to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Paris, 20. III. 1952; Stv նաև՝ Решение по делу Матвее-Моен и Клерфаум от 2 марта 1987 г., Series A, N 113, էջ 22, para. 47:

<sup>6</sup> Stv Խուան Զ. Լինց, Ալֆրեդ Ստեփան, ժողովրդավարության անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա, Կովկասի ինստիտուտ, Երևան, 2011, էջեր 26-27:

այլ գործոնների, պայմանավորված են խորհրդային հասարակության ժառանգության հաղթահարմամբ: Այսօր մեր քաղաքացիների զգալի մասին բնորոշ են «անդիմությունը» և քաղաքական օտարումը, ինչն արտահայտվում է նրանց մեջ հստակ քաղաքական դիրքորոշումների բացակայությամբ և քաղաքական իրավունքների իրացման ցածր մակարդակով: Այդպիսի պայմաններում Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական նախաձեռնող հասարակության ձևավորման համար չափազանց կարևոր է հասարակական կազմակերպությունների գործունեությունը: 2002 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների թիվը բնակչության 1000 անձի հաշվով կազմել է 0,8<sup>7</sup> միավոր: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքի համաձայն՝ 2013 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված են եղել 3757 հասարակական կազմակերպություններ<sup>8</sup>: Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացված մարդահամարի տվյալներով Հայաստանում առկա բնակչության թիվը կազմել է 2 871 771<sup>9</sup>: Այսինքն՝ յուրաքանչյուր 1000 անձի հաշվով հասարակական կազմակերպությունների թիվը 1,3 միավոր է: Սակայն միայն քանակական փոփոխությունը դեռևս խնդրի լուծում չէ: Անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունները կարողանան նպաստել իրենց անդամների նախաձեռնողականության բարձրացմանը: Դրան հասնելու համար նախ պետք է հաղթահարվի հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ մեր երկրում նկատվող վստահության պակասը: Օրինակ՝ 2007 թվականին Հայաստանի բնակչության միայն 18%-ն էր վստահում տեղական հասարակական կազմակերպություններին<sup>10</sup>:

Քաղաքացիական հասարակության ձևավորման, հետևաբար՝ նաև անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտների արդյունավետ կենսագործման վրա էապես կարող են ազդել նաև զանգվածային լրատվության միջոցների գործունեության որակը և ուղղվածությունը: Այստեղ առկա են այնպիսի վտանգներ, ինչպիսիք են՝ անհավասարակշիռ լուսաբանումը, լուսաբանման նենգափոխումը և այլն<sup>11</sup>: Այս իմաստով լրատվական դաշտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում են որոշակի երաշխիքներ<sup>12</sup>,

<sup>7</sup> Տե՛ս Погосян Г. А. Армянское общество в трансформации, Ер., 2003, стр. 223:

<sup>8</sup> Տե՛ս <http://www.justice.am/storage/uploads/stat2013.09kisam.pdf> (07.01.2014, 12:11):

<sup>9</sup> Տե՛ս <http://www.armstat.am/file/doc/99478213.pdf> (15.04.2014, 19:39):

<sup>10</sup> Տե՛ս «Civicus քաղաքացիական հասարակության ինդեքս. Հայաստանի քաղաքացիական հասարակությունը. անցումային փուլից դեպի համախմբում» /Վերլուծական զեկույց, Երևան, 2010 թ., էջ 27: [http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2011/04/20.01.11-FFinal-ArmeniaCountryReport\\_Arm-3\\_.pdf](http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2011/04/20.01.11-FFinal-ArmeniaCountryReport_Arm-3_.pdf) (01. 02. 2014, 10:51):

<sup>11</sup> Տե՛ս “Republic of Armenia. Parliamentary Elections 12 May 2007”. OSCE/ODIHR Election Observation Mission Report, Warsaw, 10 September 2007, էջ 30 (<http://www.osce.org/odihr/elections/armenia/26606>, 25. 07. 2013, 13:12):

<sup>12</sup> Տե՛ս «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 2000 թ. հոկտեմբերի 9-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը (<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1464>, 25.07.2013, 15:46), «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ մասը (ՀՀՊՏ N32 (164), 18. 10. 2001): «Տեղական հանրաքվեի մասին ՀՀ օրենքի» 22-րդ հոդվածը (ՀՀՊՏ N11 (186), Հոդ. 174, 01. 04. 2002):

որոնց նպատակը հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ընթացքում հանրային կարծիքի վրա անհարկի ազդեցությունները բացառելն է: Սակայն Հայաստանի Հանրապետությունում լրատվական ոլորտում տիրող փաստական վիճակը տարբերվում է քննարկվող դաշտի իրավական կարգավորումներից: Այսպես, «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության 2013 թ. զեկույցի համաձայն՝ մամուլի ազատության ցուցանիշով Հայաստանը 179 երկրների շարքում զբաղեցրել է 74-րդ տեղը: Նշված կազմակերպության նախորդ տարիների զեկույցների համաձայն՝ Հայաստանը քննարկվող ցուցանիշով 2009 թ. զբաղեցրել է 111-րդ, 2010-ին՝ 101-րդ, 2011-2012 թթ.՝ 77-րդ տեղերը<sup>13</sup>: Բերված տվյալները ակնհայտորեն վկայում են մեր երկրում տեղեկատվական դաշտում առկա խնդիրների մասին: Անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով պաշտպանել ոչ միայն լրատվական ոլորտի աշխատակիցների իրավունքները, այլև ստեղծել երաշխիքների ամբողջական համակարգ՝ հասարակությանը ապատեղեկատվությունից և հասարակական կարծիքի միտումնավոր խեղաթյուրումներից պաշտպանելու նպատակով:

Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման խոչընդոտները պայմանավորված են նաև նրանով, որ մեր երկրում անկախության ձեռքբերմամբ տեղի ունեցավ ազատականացում առանց ժողովրդավարության կայացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման: Ոչ ժողովրդավարական պայմաններում ազատականացումը կարող է հանգեցնել որոշակի սոցիալ-քաղաքական փոփոխությունների, օրինակ՝ լրատվամիջոցների ավելի մեղմ գրաքննություն, ընդդիմության հանդուրժում և այլն: Սակայն անկախության ձեռքբերումից հետո Հայաստանի Հանրապետությունում իրավական և ժողովրդավարական պետության գաղափարների հռչակումը ուղեկցվեց դրանց թերի կենսագործմամբ, և ժողովուրդ-պետություն հարաբերություններում գործընկերային մոտեցումից պետությունը փոխակերպվեց հասարակության նկատմամբ ավելի շատ իրավունքներ, քան պարտականություններ ունեցող քաղաքական կազմակերպության:

Քաղաքացիական հասարակության՝ որպես ժողովրդավարական ինստիտուտի գործունեության արդյունավետության բարձրացման համար կարևոր է նաև բնակչության իրավական կրթության և իրավական դաստիարակության պատշաճ մակարդակի ապահովումը: Անմիջական ժողովրդախիշխանության ընդդիմախոսները հաճախ հիշեցնում են ժողովրդի կողմից ոչ գրագետ որոշում կայացնելու վտանգի մասին: Սա իսկապես շոշափելի խնդիր է հատկապես մեր հասարակության համար: Սակայն մենք հեռու ենք այն մտայնությունից, որ նշված հիմնավորմամբ պետք է հրաժարվել անմիջական ժողովրդախիշխանության ինստիտուտների կիրառումից կամ սահմանափակել դրանց գործողությունը: Ոչ թե հրաժարվել, այլ կրթել և դաստիարակել, մշակել և կենսագործել բնակչության իրավական տեղեկացվածության մակարդակի բարձրացմանն ուղղված պետական ծրագրեր, նպաստել հասարակության պատշաճ իրավական մշակույթի ձևավորմանը, ինչը, մեր պատկերացմամբ, կնպաստի քննարկվող խնդրի լուծմանը: Նման պահանջ է ներկայացված նաև Քաղաքացիական և

<sup>13</sup> Տե՛ս <http://www.panorama.am/am/society/2013/01/30/reporters-without-borders/> (08.01.2014, 10:23):

քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մեկնաբանություններում<sup>14</sup>: Սակայն քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման՝ պետության պարտականությունը չի նշանակում, որ պետությունն ինքն է ձևավորում քաղաքացիական հասարակություն: Ամբողջ խնդիրը այն է, որ քաղաքացիական հասարակությունը պետք է ձևավորվի ինքնաբերաբար, առանց արտաքին միջամտությունների: Իսկ դրա համար անհրաժեշտ է՝ հասարակությունը ունենա ինքնակազմակերպման և ինքնաարտահայտման համապատասխան մակարդակ: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում առայժմ նկատելի է պետության անմիջական մասնակցությունը քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Մեր երկրում անհրաժեշտ է քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացը դուրս բերել պետական ազդեցության դաշտից: Ինչպես ցանկացած երկրում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության կայացումը չի կարող տեղի ունենալ առանց պետության մասնակցության: Սակայն այդ ժողովրդավարությունը չպետք է կրի պետականորեն վերահսկելի բնույթ, այլ կերպ ասած՝ չպետք է վերածվի կառավարվող դեմոկրատիայի:

Ժողովրդաիշխանության իրացման կապակցությամբ ժողովրդավարության ձևավորման հաջորդ նախապայմանը կայացած **քաղաքական համակարգն** է: Ժողովրդավարական միջավայրի ստեղծումը նշանակում է դրական ընկալում ձևավորել քաղաքական համակարգի այնպիսի ինստիտուտների նկատմամբ, ինչպիսիք են՝ կուսակցությունները, ընտրությունները, ընտրական օրենքները, քաղաքական դեկավարությունը, միջկուսակցական դաշինքները և օրենսդիր մարմինները, որոնց միջոցով հասարակությունը քաղաքականապես ինքնակազմակերպվում է ժողովրդավարական կառավարություն ընտրելու և նրան վերահսկելու համար:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական դաշտն աչքի է ընկնում կուսակցությունների մեծ քանակով, բայց ոչ դրանց կայացվածությամբ: Այսպես, 2013 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված են եղել 78 կուսակցություններ: Դրանց թիվը 2004 թվականին կազմել է 123, 2006-ին՝ 90, 2008-ին՝ 73<sup>15</sup>: Թեև վիճակագրությունը ցույց է տալիս, որ 21-րդ դարի առաջին տասնամյակում Հայաստանում կուսակցությունների թիվը նվազել է, սակայն, մեր կարծիքով, դա չի հանգեցրել քաղաքական դաշտում գործունեությունը շարունակող կուսակցությունների դերի բարձրացման: Կուսակցությունները ոչ պատշաճ մակարդակով են կատարում հասարակության քաղաքական կազմակերպման և քաղաքական կամքի արտահայտման իրենց սահմանադրական գործառույթը: «Կուսակցությունների մասին» 2002 թ. հուլիսի 3-ի ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2002 թ. դեկտեմբերի 4-ի ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը<sup>16</sup> նախատեսում էին կուսակցու-

<sup>14</sup> Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր: Գործեր, նյութեր, մեկնաբանություններ (Սառա Ջոզեֆ, Ջենի Շուլց, Մելիսա Քասթան), Երևան, 2009, էջ 596:

<sup>15</sup> Տե՛ս <http://www.civilitasfoundation.org/am/spotlight/2009-10-30-08-13-29/828-number-of-political-parties-in-armenia.html> (08.01.2014, 15:56):

<sup>16</sup> Տե՛ս ՀՀՊՏ N1 (236), Հոդ. 6, 07. 01. 2003:

թյունների լուծարման հնարավորություն՝ պայմանավորված քաղաքական դաշտում նրանց պասիվությամբ<sup>17</sup>: Սակայն ՀՀ սահմանադրական դատարանը 2006 թ. դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-669 որոշմամբ<sup>18</sup> ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչեց «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը<sup>19</sup>:

Հանրապետությունում կուսակցական համակարգի կայացմանը կարող են նպաստել արդար ընտրությունների անցկացումը, քաղաքական մշակույթի ձևավորումը, ինչի արդյունքում էլ քաղաքական դաշտում առանց իրավական հարկադրանքի իրենց գործունեությունը աստիճանաբար կդադարեցնեն հասարակության մեջ սոցիալական հենարան չունեցող քաղաքական ուժերը:

Ինչ վերաբերում է ընտրություններին, ապա Հայաստանի Հանրապետությունում դրանք ներկա դրությամբ հանդես չեն գալիս որպես հասարակության քաղաքական ինքնաարտահայտման կայացած ընթացակարգ: Հայաստանում անցկացված ընտրություններին եվրոպական կառույցների կողմից տրված գնահատականները<sup>20</sup> վկայում են, որ ընտրությունները դեռևս ոչ միայն չեն իրականացնում հասարակության քաղաքական միավորման իրենց գործառնությունը, այլև հաճախ հասարակական ցնցումների պատճառ են դառնում: Ուստի ընտրությունների անցկացման օրինականությունը և կուսակցական համակարգի կայացումը ներքաղաքական կյանքի բարելավման առաջնահերթություններ են, առանց որոնց անհնար է ժողովրդախիշխանության իրացումը ժողովրդավարական միջոցներով:

Ժողովրդավարության կայացման կարևոր բաղադրիչ է **օրենքի գերակայությունը**, որը քաղաքացիների իրավունքների իրացման համար կապահովի իրավական երաշխիքներ: Ինչպես նշում էր ֆրանսիացի լուսավորիչ Վոլտերը «Ազատության իմաստն այն է, որ կախում ունենաս միայն օրենքներից»<sup>21</sup>: Սակայն այս պարագայում խոսքը ոչ թե պարզապես օրենքի, այլ իրավական օրենքի մասին է, որը հնարավորություն կտա ժողովրդախիշխանության հետ կապված հարաբերությունները կարգավորել իրավունքի հանրաձանաչ սկզբունքների հենքի վրա: Երբեմն իրավունքի գերակայությունը, ստանալով սահմանափակ մեկնաբանություն, նույնացվում է օրենքի գերակայության

<sup>17</sup> Խոսքը վերաբերում է Ազգային ժողովի վերջին երկու ընտրություններին չմասնակցելուն կամ դրանցից որևէ մեկում օրենքով սահմանված նվազագույնից քիչ կողմ ձայներ ստանալուն: Տե՛ս՝ ՀՀՊՏ N34 (209), Հոդ. 775, 15. 08. 2002:

<sup>18</sup> Տե՛ս ՀՀՊՏ N4 (528), Հոդ. 32, 17. 01. 2007:

<sup>19</sup> «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. փետրվարի 9-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչվեցին «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի նշված դրույթները: Տե՛ս՝ ՀՀՊՏ N13 (887), Հոդ. 187, 07. 03. 2012:

<sup>20</sup> Տե՛ս օրինակ՝ «Republic of Armenia. Parliamentary Elections 12 May 2007»/OSCE/ODIHR Election Observation Mission Report, Warsaw, 10 September 2007, էջեր 28-31 (<http://www.osce.org/odihr/elections/armenia/26606>, 27.07.2013, 22:14); Տե՛ս նաև՝ Հայաստանի Հանրապետություն, Ազգային ժողովի ընտրություններ, 2012 թ. մայիսի 6/ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց, Վարշավա, 2012 թ. հունիսի 26, էջեր 44-50 (<http://www.osce.org/hy/odihr/elections/91962>, 27. 07. 2013, 23:49):

<sup>21</sup> Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 383:

հետ, մինչդեռ բացառապես իրավունքի օբյեկտիվ հատկանիշների արտահայտման ձևն է օրենքը դարձնում իրավական օրենք<sup>22</sup>:

Իրավունքի գերակայության սկզբունքը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում մարդ-պետություն հարաբերություններում: Ժողովրդավարության կայացումը ենթադրում է պետության և անհատի միջև հարաբերությունների այնպիսի հավասարակշռության ապահովում, որի դեպքում անհատը պաշտպանված կլինի պետության կամայականություններից: Այս իմաստով չափազանց կարևոր է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը, որի 3-րդ մասը հռչակում է. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Պետության գործունեությունը իրավունքով կաշկանդելը բխում է ոչ միայն մարդու և քաղաքացու, այլ նաև պետության շահերից: Տարբեր երկրների իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների վրա խարխված պետական քաղաքականությունը և օրենքները հասարակության արդյունավետ կառավարման գրավական են: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ընդգծում է իրավունքի գերակայության նշանակությունը հասարակության և պետության զարգացման, ժողովրդավարության ձևավորման համար:

Ժողովրդաիշխանության պատվիրանները ժողովրդավարական միջավայրում կենսագործվում են պետական կառավարման համապատասխան համակարգի միջոցով, որը ժողովրդավարության ձևավորման գլխավոր պատասխանատուն է: Այստեղ կարևոր են ոչ միայն պետական համակարգի լեգիտիմությունը, կենսունակությունը, մասնագիտական արհեստավարժությունը և կազմակերպչական պոտենցիալը, այլ նաև կառավարման համակարգի ճիշտ ընտրությունը, անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության ինստիտուտների հավասարակշռված կիրառումը:

Քանի որ վերջինս ուղղված է հանրային խնդիրների լուծմանը, ուստի կարող է ծագել անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության ինստիտուտները միմյանցով փոխարինելու վտանգ: Նշված ինստիտուտները միմյանց փոխլրացնող, բայց միևնույն ժամանակ ինքնուրույն գործող կառուցակարգեր են: Այսպես, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (4-րդ հոդվածի 2-րդ կետի «գ») ենթակետ<sup>23</sup> և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (5-րդ հոդվածի 2-րդ կետի «ա») ենթակետ<sup>24</sup>, անդրադառնալով հանրաքվեի չորվող հարցերին, տարանջատում են անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության ոլորտները: Քննարկվող խնդրի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը «Քաղաքացիներ Արթուր Սաքունցի, Խաչիկ Շահբազյանի, Կարինե Այվազյանի, Սևակ Դերձյանի, Կոլոդյա Աբազյանի և Էդգար Խաչատրյանի դիմումի հիման վրա «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահ-

<sup>22</sup> Стѹ Проблемы общей теории права и государства. Учебник для вузов. Под общ. ред. академика РАН, доктора юрид. наук, проф. В. С. Нерсисянца.-М.: Изд. НОРМА. 2001, էջ 189:

<sup>23</sup> Стѹ ՀՀՊՏ N32 (164), 18.10.2001:

<sup>24</sup> Стѹ ՀՀՊՏ N11 (186), 01.04.2002:

մանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» 2007 թվականի դեկտեմբերի 18-ին կայացրած ՍԴՈ-721 որոշման 8-րդ կետում նշում է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ լինելով ժողովրդաիշխանության իրականացման (տեղական բնակչության կամքի արտահայտման) սահմանադրորեն որոշված ինքնուրույն ձև՝ հանրաքվեն չի կարող փոխարինել այդպիսի իշխանության այլ ձևերին այնպես, ինչպես վերջիններս՝ հանրաքվեին»<sup>25</sup>:

Ժողովրդավարության կայացման կապակցությամբ պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նաև համապատասխան պաշտոնատար անձանց արհեստավարժությունից: Եթե նույնիսկ երկրում առկա են ժողովրդավարության ձևավորման իրավական, տնտեսական և այլ նախադրյալներ, սակայն կառավարման համակարգում ընդգրկված են անբարեխիղճ, համապատասխան մասնագիտական գիտելիքներ և պատրաստվածություն չունեցող պաշտոնատար անձինք, ապա ժողովրդավարության կայացումը կարող է ուղեկցվել բացթողումներով: Կարևորելով նշված խնդրի լուծումը՝ օրենսդիրը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 8-րդ կետում<sup>26</sup> հանրային ծառայության հիմնական սկզբունքների շարքում հիշատակում է նաև հանրային ծառայողների արհեստավարժությունը: Կարծում ենք, որ հանրային ծառայողների ընտրության հարցում նշված սկզբունքի պահանջների պահպանումը էապես կարող է բարձրացնել հանրային կառավարման արդյունավետությունը և արագացնել Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության կայացումը:

Ժողովրդավարության կայացման վերջին պայմանը **գարգացած տնտեսական համակարգի** առկայությունն է: Ամբողջ խնդիրը տնտեսական ոլորտին պետության չափավոր մասնակցության կառուցակարգերի մշակումն է և ներդրումը: Այստեղ պետք է բացառվեն բոլոր ծայրահեղությունները, որոնք կարող են դրսևորվել վարչահրամայական կամ զուտ շուկայական տնտեսության առկայությամբ: Պետության միջամտությունը պետք է դրվի այնպիսի շրջանակների մեջ, որը չի վնասի տնտեսական ոլորտի ազատությունը և միաժամանակ կենսունակ կլինի ապահովելու նրա անվտանգությունը: Ուստի կարևորվում է պետության և շուկայի արդյունավետ համագործակցությունն ապահովող ինստիտուտների ամբողջությունը, որը կոչվում է տնտեսական հասարակություն: Ժողովրդավարության կայացման համար մեր երկրում շարունակում են գերակա խնդիր մնալ տնտեսական հավասար հնարավորությունների ապահովումը, հակամենաշնորհային օրենսդրության բարելավումը և անխուսափելի կիրառումը:

Բացի նշված գործոններից, Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության կայացման վրա որոշակի ազդեցություն ունեն նաև **արտաքին գործոնները**: Ժամանակակից պայմաններում միջազգային համագործակցությունը, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին անդամակցելը ներպետական մակարդակում հանգեցնում են որոշակի փոփոխությունների: Այդ փոփոխություններից հատկապես արդիական և տեսանելի են մեր երկրի օրենսդրության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, որոնք հաճախ պայմանավորված են, օրինակ, Եվրոպայի խորհրդին Հա-

<sup>25</sup> Տե՛ս ՀՀՊՏ N1 (591), 07.01.2008:

<sup>26</sup> Տե՛ս ՀՀՊՏ N37 (840), 17.06.2011:

յաստանի Հանրապետության անդամակցությամբ կամ Եվրոպական Միության հետ ունեցած համագործակցային հարաբերություններով: Սակայն այդ արտաքին ազդեցությունները կարող են արտացոլվել ոչ միայն օրենսդրության, այլ նաև քաղաքացիական հասարակության ձևավորման, տնտեսական համակարգի ազատականացման և այլ ոլորտներում: Այլ կերպ ասած՝ ժողովրդավարության կայացման վրա ազդող արտաքին գործոնները միջնորդավորվում են պետական քաղաքականության միջոցով և դառնում ներպետական գործունեության ուղղություններ:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ նշված նախադրյալների առկայությունը կապահովի Հայաստանի Հանրապետությունում ժողովրդաիշխանության իրացումը լիարժեք ժողովրդավարական միջավայրում:

## ДЕМОКРАТИЯ КАК СОЦИАЛЬНАЯ И ПОЛИТИКО-ПРАВОВАЯ СРЕДА РЕАЛИЗАЦИИ НАРОДОВЛАСТИЯ

Руслан МАРАНДЯН

*Аспирант Учебного комплекса полиции РА*

Научная статья посвящена обсуждению содержания понятий “народовластие” и “демократия”. Анализу подверглись научно-теоретические и словарные истолкования указанных государственно-правовых явлений, проведено обобщение признаков, на основе которого, по мнению автора, даны всеобъемлющие определения этих понятий. Одновременно сделан взгляд на соотношение народовластия и демократии, обсуждена опасность расхождений, возникающих между провозглашением правовых возможностей и их осуществлением особенно в переходных государствах. В научной статье также рассмотрены уравновешенное использование институтов прямого и представительного народовластия, предпосылки реализации концепции народовластия и формирования истинной демократии.

## DEMOCRACY, AS A SOCIAL AND LEGAL-POLITICAL ENVIRONMENT FOR REALIZATION OF PEOPLE POWER

Ruslan MARANDYAN

*Postgraduate student of the RA Police Educational Complex*

The article is devoted to the study of the terms “people power” and “democracy”. We have studied the scientific-theoretical and dictionary comments of the mentioned state-legal phenomena, generalization of the characteristics have been made, due to which broader definitions have been given, based on the opinion of the author. At the same time, we touched upon the topic of relation between people power and democracy, also the risk of proclamation of legal possibilities and the divergence, which may rise in the process of their implementation, especially, in the case of transitional countries. In this scientific article we also touched upon the issue of balanced application of direct and representative people power institutions, as well as the prerequisites of people power concept implementation and formation of real democracy.

**Բանալի բառեր** - ժողովրդավարություն, ժողովրդաիշխանություն, ինքնիշխանություն, քաղաքացիական հասարակություն, քաղաքական համակարգ, իրավունքի գերակայություն, տնտեսական համակարգ, ազատականացում

**Ключевые слова:** демократия, народовластие, суверенитет, гражданское общество, политическая система, верховенство права, экономическая система, либерализация

**Key words:** democracy, people power, sovereignty, civil society, political system, rule of law, economic system, liberalization